

Մամուլի մէջ եւ շարունակ դրուում են Գերմանական ազգի գէպի հայ կարօտեալ ժողովուրդը բռնած գերբ պարզարանող յօդուածներ: Եկեղեցական ամենակարեւոր թերթերից մէկը հօրց էր ստացել Ելշտոկի, թէ ինչու նա իւր կարծեք չէ յայտնում այս խնդրի մասին: Վեր կաշտահին թեանցուի Բոսփորի ափին Մարդասպանի հետ նորա այցելութիւնը հարեմում ցաւեցրեց (մեր աւետարանական Ելշտոկիների սկիւրը: ասում են նորա իսկ թերթը աշխատում է Վերմ կաշտեր քաղաքականութիւնը պաշտպանել, առարկելով որ Տաճկաստանում ընդհ. քրիստոնէակաների կոտորած չէ կղել: այլ հայերի, իսկ այդ ներքին գործ է որ ինչքան և չար ու արեւնախանձ լինէր, օտարը նորա մէջ խառնուելու իրաւունք չունի, և կաշտերը բարեկամութիւն ցոյց տալով տաճիկներին նոցա հպատակ քրիստոնէականներին աւելի է օգնած լինում՝ քան բողոքելով նոցա գէտ:—Առհասարակ բոլոր արեւելքի քրիստոնէակաների նկատմամբ շատ աւարտեղութեամբ են կաշտեր պաշտանական ազգիկցներ և կողմնակի դիտողների կարծեքները: Մինչ առաջինները տաճիկներին են ջատագոյսում, նոցա դանապան գեղեցիկ յատկութիւններ, վերագրում՝ ահա ինչպէս է դատում օրենսակ զերջիններիցս մէկը: Ամէն աեղ արեւելքում ևս այն տըպուտութիւնն ստացայ, որ քրիստոնէայ ազգաբնակից թիւնը, այլ և մեղից ամենահետեւ եկեղ, համայնքի պատկանողները՝ ընդհանրապէս առած բարձր են մասնագականից: Ինքանք անխուստիբէլ մահուան է դատապարտուած: Նորա բոլորովին դուրի լինելը որ և է փրկագործական գաղափարից, իւր ճակատագրական տեսութիւնից, անհրաժեշտաբար հետևող անհամբերատարութիւնը, որի նկատմամբ կասկածել պէտք չէ՝ բարձր գանակարդի անձնաւորութեանց հանդիսան որ և արժանաւորել բռնութեամբ տեսնելով, բողոքականութեան մեղիացուցիչ ազդեցութիւնը որ մի անասի երկրորդ դրախտ է նորա համար և զորա հետ կապուած ոտոր գերբ կնոջ, որ մինչև անգամ հոգուց դուրի է համարուում— դարձում են նորան խիստան քաղաքակրթական կեանքի հայտն անմատչելի և անպէտք: Ընդհակառակն արեւելքի քրիստոնէայ ժողովուրդները, նոյն իսկ եթէ նոցա քրիստոնէութիւնն ըստ երևութիւն մի մեռեալ ձեւականութիւն է միայն և դանապան վատ յատկութիւններ նոցա բնաւորութեան ուղ և ծածն են մտել՝ տշնտմենային ընդունակ են կենդանի քրիստոնէութիւն և իսկական քաղաքակրթական կեանք դարդացնելու: Նորա տշնտմենային հազորդակից են փրկագործութեան, նպատակներ ունին միակնութիւնից դուրս ամուսնութիւն չեն ճանաչում և կենը նոցա մօտ հասարակ է մարդուն:

— Առաջաբովեան արժանի է նաև Münchener Allgemeine Zeitung նշանաւոր թերթի № 42 յաւելումի մէջ յառաջ բերուած մի կաթնիկ քահանայի նամակը, որ Մայնիայ անդիմանցի վարիչն է: Նա գրում է անցեալ թիւի հոկտ. 8-ին իւր մեծաւորին, թէ Վերմ, դեպքանաւանքս պաշտպանութեան ներքոյ այդ քաղաքում բաշտած սրբանոցը սկսել է իրեն գրուել հայ որբերին, որոնք առաջ կաթնիկացի գաղացներ էին յաճախում: Նամակի գրողը գործն պատմաւոր համարում է այն, որ քաղաքականներն ամենայն մեծահոգութեամբ և աշքի ընկնող գոհարեղութիւններով օգնել են հայերին կարեքի միջոցներ որով և նոցա վատահոթել են են ձեռք բերել: Նա երկիւղ է յայտնում՝ մի դուրից անյոյկնով միենցն ժողովրդակ Վերմ կառավարութեան ազդեցութիւնը զօրանայ և Ֆրանսիականը ընկնի:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿՐԹՈՒԱԾ ՔԱՆԱԿԱՆԵՐԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴԸ:

Միջնակարգ դպրոցի կրթութիւն ունեցող մեր երիտասարդ գիւղական քահանաներից մէկը՝ արձագանգ տալով մեր հրատեղին ուղարկել է եւ խստաւանում է ուղարկել մեզ ահնարկներ «Ժողովրդական մէջ ինչ ինչ սովորութիւնների եւ գեղձումների վերաբերմամբ»:

Իւր առաջին անկարկներով նա շօշափում է կրկին այն հին ցաւը, թէ մեր քահանաներն ըստ մեծի մասին անհամարատասխան են իրենց կոչման, եւ այդպիսի տգէտների քաղմանալուն պատճառ համարում է գլխաւորապէս ընտրողների խաւար նայեացքը. Այդպիսի մարդիկ սիրում են, որ քահանան տոոր լինի իրենցից, որ կալողանան նորա գլխին պուպը. Զաւրկել սիրում են այնպիսի քահանայի, որը իրենց կեղծաւորաբար շողորթում է: Թէ որչափ ուղիղ է այս կարծիքը՝ մենք չենք կամենայ ընկալտել: Կնկատենք միայն, որ յիշան մեր ժողովուրդը, եւ ոչ միայն տգէտ, այլ եւ

ամէնից կրթուած ու բարձր դասակարգը սովորել է հոգեւորականների վերայ իրեն իւր ծառաների վերայ նայելու եւ մեծամեծ պահանջներ անելով նոցանից՝ քանի գնում աւելի ու աւելի մեծ արհամարհանք է ցոյց տալիս նոցա, որ ամենեւին քաջալերիչ լինել չի կարող այդ պահանջներին բուսականութիւն տուող մարդիկ ստալարէզ հրաւիրելու գործին։ Այս մասին մենք ուրիշ անգամ եւս խօսել ենք։ Կարելոր ենք համարում այս անգամ առանձնապէս ուշադրութեան առնել մեր թղթակցի առաջարկած դարմանը։ Եւս ասում է՝ թէ ժողովուրդը «մեծ նշանակութիւն է տալիս արտաքին փայլերին», ոգեւորութեամբ է պատմում՝ այն հին քահանաների մասին, որոնք այդպիսի փայլեր ունեցել են եւ պատիւ վայելել Հոգեւոր բարձր իշխանութեան առաջ, ուստի առաջարկում է նոյնպիսի փայլերով «բարձրացնել ուսումնական քահանայի նշանակութիւնը»։ «Միշտան ոգում է ուսումնական լինի քահանան, բարոզէ՛ այդպիսի քահանայի նշանակութիւնը չի բարձրանում՝ մեր ժողովրդի մէջ։ Եւս ուզում է որ Հոգեւոր իշխանութիւնը ինքը այդպիսի քահանայի նշանակութիւնը բարձրացնէ, հետաքրքրուի նրանով։

Բոլորովին սխալ չէ հարկուտ այս պատճառարանութիւնը։ Ինչ խօսք, որ Հոգեւոր իշխանութիւնը մեծապէս նպաստել կարող է մեր քահանաների ընկած վարկը բարձրացնելու՝ լաւերին եւ ուսումնականներին խրախուսելով, առաջ քաշելով, պարգևատրելով, եւ կարելոր պաշտօններ ու յանձնարարութիւններ տալով նոցա, քայց մի՞թէ արդէն տեղի չունի այդ ընդարձակ չափով մի՞թէ, ինչ վերաբերում է յատկապէս պարզեւարաշխութեան կամ փայլեր շնորհելուն ամէն չափ ու սահմանից չի ելեր այն եւ յաճախ փոխանակ պտացողի պատիւը բարձրացնելու, ընդհակառակն նորա ծայրահեղ անարժանութեան պատճառաւ միայն ստացած պարգևի արժէքն է ձգում։ Մենք զոնէ՛ որչափ առիթ ենք ունեցել դիտելու՝ խիստ շատ ենք տեսել մեր հոգեւորականութեան մէջ անարժանների պարգևատրուած, քայց որ իսկապէս արժանաւորներ առանց պատճառի մի կողմ

ձգուած, հալածուած լինէին՝ այդպիսի դէպքեր մտաբերել զրեթէ չենք կարող։ Պէտք է շմոռանալ, որ մեզանում՝ սոհասարակ ամէն դասակարգի, մանաւանդ թէ հասարակական ստալարէզներում՝ ծառայող մարդիկ չափազանց պահանջող են։ Մենք յաճախ տեսել ենք, թէ ինչպէս Գերմանիայում կամ Փրանսիայում համալսարանական կրթութիւն ստացած երիտասարդներ ամենահամեստ բոժկով (Փրանսիայում օր. 800-900 ֆր. կամ 300-350 ր.), հեռու յետ ընկած գիւղեր են գնում եւ այնտեղ էլ մնում ու ծերանում, առանց պարգևների ու բարձր պաշտօնների հետամուտ լինելու։ Իսկ մեզանում ով մի որ եւ է դպրոցում եղել է՝ հանդէս է գալիս մեծ յաւակնութիւններով, իրեն ուսումնական մարդ, որին ամէնքը ծանաչել եւ պատիւ տալ պարտաւոր են, որին մի քանի ամիս չանցած գործակալ պէտք է նշանակեն, խաչ ու փլուտ տան, եւ վերջապէս գիւղից քաղաք փոխադրեն, որովհետեւ նա հանգամանքներից ստիպուած միայն գիւղում է ձեռնադրուել, ապա թէ ոչ քաղաքի արժանի է, գիւղական խաւար կեանքում ապրել չի կարող։

Մեր կարծիքով այսպիսի տրամադրութիւնից ու անտեղի պահանջներից են յառաջ գալիս մեծ մասամբ Հոգեւոր իշխանութեան դէմ եղած տրտունջներն ու բողոքները, թէ նա ուսումնականներին ստալարէզ չէ տալիս եւ հալածում է։ Անկասկած քիչ չեն դէպքեր, երբ իշխանութիւնը գերադասում է անարժանին արժանաւորից, աշխարհի բան է այդ եւ որտեղ չի լինում, քայց ըստ մեծի մտքին, կրկնում ենք, եթէ լաւ քննենք՝ կզոնենք, որ արժանաւոր համարուածը իրեն վայել դիրքի մէջ է՝ անարժանն է միայն անարժանաբար բարձր դիրքի հասել։ Թիւրիմացութիւններ շատ են յառաջ գալիս նորանից, որ ամէն ուսումնական արժանաւոր է համարուում, կամ՝ ի նկատի չեն առնուում նորա ընտրութեան այնպիսի գծեր կամ՝ նորան չըջալատող այնպիսի հանգամանքներ, որոնք եւ սովորաբար իսկական պատճառն են լինում նորա յառաջ չգնալուն, եւ ոչ իշխանութեան աշտուութիւնը։ Լաւ քահանաներ մենք ի հարկ է շատ քիչ ունինք,

քայց իւրարանշիր կենսարոնում կարելի է գտնել մի կամ մի քանի այնպիսիներին, որոնք հազար եւ մի շար ու քարի են տեսել, աշխարհը փորձել, շատ մարդոց ծամբայ են դրել, եւ իրենց բնական խելքով կամ ճարտիկութեամբ անուն եւ դիրք ձեռք բերել: Բնականաբար երբ այդպիսիների հետ դէմ առ դէմ է գալիս մի նորելուկ ուսուցման կան քահանայ եւ պահանջում է, որ նախապատուութիւնն իրեն տան: որովհետեւ մի քանի գիրք աւելի է կարդացել, կյուսակարութի ու դժգոհ կմնայ: Ժեռ ու փորձառու քահանան կարող է տգէտ լինել եւ բարոյական պակասութիւններ ունենալ, քայց նա իւր մարդը ճանաչում է եւ գիտէ ում հետ ինչպէս պէտք է վարուել: Սխալ է կարծել, թէ նա միայն ստորութիւններով ու շողորորթութեամբ է համոյանում: Կամ երիտասարդ ուսումնական քահանան սիրելի չէ ժողովուրդին, որովհետեւ ազնիւ է եւ անընդունակ ազդեցիկ անձանց առջեւ գլուխ խոնարհեցնելու: Դժբաղդաբար յիմախ տեսնում ենք, որ նորա երկուն էլ բարոյականութեան նոյն աստիճանի վերայ են եւ երիտասարդը շատ չէր տառաւորի զանազան միջոցներ գործ դնելու, որպէս զի համոյանայ: քայց շնորհ չունի, իւր անորոշ, անգոյն ուսման հետ նա բերում է մեծ անձնապատանութիւն, թեթեւամտութիւն, կոպիտ վարուեցողութիւն, արհամարհանք դէպի տգէտ գիւղացին, որոնցից ծերունին ազատ է, եւ նորա բնական խելքը, առողջ դատողութիւնը, փորձառութիւնը, իւր ծխականների բոլոր կարիքներին տեղեակ լինելը եւ կարեկցելու բնորոնակութիւնը աւելի կարեւոր եւ գնահատելի բաներ են: քան դատարկ ուսումը:

Եւ միթէ յիշաւի դատարկ չի լինում սովորաբար այդ ուսումը եւ բոլորովին անհամապատասխան քահանայական կոչման պահանջներին: Երբ միջնակարգ կամ ստորին կարգի դպրոցից ելած մի երիտասարդ, թէկուզ մի համալսարանական քահանայ է լինում՝ առանց ծանօթ լինելու եկեղեցական կարգերին, առանց եկեղեցում երգել կարողանալու, առանց տարրական հասկացողութիւն ունենալու քրիստոնէական կրօնի հիմունքների

մասին, առանց տեսարան անգամ կարդացած լինելու, եւ որ ամէնից ցաւալին է, առանց իր կոչման սրբութիւնը ճանաչելու ու նորա առաջնորդող զաղափարներին հաւատալու՝ դժուար է բնորոնել, թէ նա ինչու իրրեւ ուսումնական աւելի արժանաւոր պէտք է համարուի քան տգէտը: քանի որ սա բոլոր յիշեալ գործերի մէջ նորանից աւելի հմտութիւն ունի եւ անհամեմատ պակաս յաւակնութիւն: Չգիտենք կայ արդեօք աշխարհիս վերայ մի ուրիշ տեղ, ուր նոյնպէս հետեւողներ գտնէր մեզանում դժբաղդաբար օր աւուր ամող եւ տարածուող այն ծայրայեղ մալորութիւնը, թէ հոգեւորական կարելի է լինել՝ հոգեւորականութիւնը հնացած եւ անպէտքացած քան համարելով ուրիշ լուսամիտների հետ մէկեւեղ ծաղրելով նորան վերաբերեալ պարտականութիւնները եւ պահանջելով, որ ժողովուրդը յարգէ իրեն այնումենայնիւ իրրեւ լուսամիտ հոգեւորականին: Մենք չենք կարծում, թէ նոյն իսկ լուսամիտներ ի մէջ այսպիսի հոգեւորականին ծնմարիտ համակրողներ գտնուին: նոքա գուցէ զանազան տեսակէտներով կշոյնն իրենց այդպիսի հակասական դիրքի մէջ դնողի յիմարութիւնը: քայց երբէք նորա ծուխը չեն կազմի եւ չեն ցանկանայ այնպիսի հովիւ ունենալ, որ ինքն սկզբունքով հակառակ է իւր կոչման: Ասել ենք եւ երեւի շատ անգամ դեռ առիթ կունենանք կրկնելու, որ զոր ջանք է հոգեւորական ասպարէզի կարեւորութիւնը կողմնակի հիմունքներով արդարացնել կամենալ. կամ պէտք է համաձայնել այն գիտնական հրապարակախօսների հետ, որոնք անբացատրելի եռանդ են ցոյց տալիս մանաւանդ վերջին ժամանակներս՝ ողորդելով մամուլը ամենախոր խնդիրների մասին տուած ամենատառիկ դատողութիւններով, եւ կատարեալ համարձակութեամբ կրօն, քրիստոնէութիւն, եկեղեցի, հոգեւորականութիւն փոստ ու իրենց նշանակութիւնը կորցրած բաներ հրատարակելով. պէտք է համաձայնել, թէ այդ հրատարակախօսները, որոնք վերամիարձ ոճով քննադատում են եկեղեցւոյ ամբողջ անցեալը, առանց մի քանի եկեղեցական հայրերի գոնէ անունները գիտենալու, եւ օր, նոր պղատոնական հեթանոս

փրկեստիպ Պլուտինին եկեղեցւոյ հայրերից
աւարներն կարողանալու՝ երեւելի զիտնական-
ներ են ևւ նոցա գրած իւրաքանչիւր տողը զուտ
ճշմարտութիւն — ևւ կամ՝ ընդունել ընդ միշտ
որ անտարանը հասկացող, նորա ճշմարտու-
թիւններն հաւատացող ևւ իւր կոչման վե-
րաբերնալ ըողոր պարտականութիւնները կա-
տարելու պատրաստ անձը միայն կարող է
հոգեւորական լինել։ Միջին ճանապարհ չկայ
— Թո՛ղ համոզուած լինին մեր երիտասարդ
ուսումնական քահանաները, որ ուսման ևւ
պարգեւների փայլը նոցա ոչինչ չի օգնի
եթէ պակասում է իսկական հոգեւորականին
փայլը առաքինութեան փայլը ևւ հմուտութիւնը
որ ջերմ հաւատով ևւ լուրջ աշխատութեամբ
է ձեռք բերուում՝ ու Գիրքը՝ իւր կոչման
վերաբերնալ պարտականութիւնները ևւ իւր
յօտի պէտքերը լրջօրէն ուսումնասիրելով։



ՀԵՐԵՒԱՆՅԻ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կարեւոր են համարում «Նոր-Գարեի խմբա-
գրութեան հրատարակել նախ քան ապագրութեան
յանձնելը վարք ինչ աւելի ուշադրութեամբ քննե-
լու իրեն ուղարկուած թղթակցութիւնների ար-
ժանահաւատութիւնը, երբ խօսքն այնպիսի հաւա-
տատութեան մասին է, որպիսին է Մայր Աթոռի
ձեմարանը, Թէ որչափ բարեկեղծ անձն է նորա
«Մարտի» կեղծ անուան ներքոյ թաղեալ թըր-
թակիցը՝ այդ ստուգելու համար բաւական է
յիշել, որ նա չի խղճահարուում Գերմանիայում
5½ տարի փրկեստիպութիւն ևւ ատաւածարա-
նութիւն ուսած ևւ Բոննի համալսարանում սո-
սուածարանութեան կանդիտատի քննութիւն
ատած մի երիտասարդի համար առել, թէ
«չգիտէ, որ լեւան քաղաք ու Գրքի թէ ուրեշ
դրքերի մէջն է, սաղմոսների Մովսիսի է համա-
րում»։ Պ. Ա. Տէր Գասպարեան ձեմարան է հրա-
ւերուել միմիայն մատենադարանապետի պաշտո-
նով՝ ապագային թողնելով որդելի թէ ուրեշ ինչ
գործեր կկարողանայ նա կատարել։ Ամէն քարե-
կիղմ ահանատես կիկայէ, որ նա ամենայն բարե-
խղճութեամբ կատարում է իւր պաշտօնը ևւ ար-
դէն իսկ շատ զեղեցիկ կերպով կարգի քնուած մատենա-
դարանի գրեականը նոր ցուցակագրութիւնը վերջա-
ցնելուց յետոյ՝ անում է այն, ինչ որ կանէր ու-

րել որ ևւ է մատենադարանապետ։ Ընդհանուրի
խօսակցութեան առարկայ ու Էջմիածնում՝ նա
երբէք չի եղել։ խօսակցութեան առարկայ դար-
ձնել նորան ևւ «անարգարութիւն ևւ անարեւելադ-
նութիւն» կամ «տղեղ երևոյթ» համարել ձեմա-
րանի վարչութեան վարմունքը, որ մի համալսա-
րանաւարտ երեւաւարդի (չառ լաւ տեղեակ թէ
«ո՛վ է նալեանդեանը՝ նաղարեանը, Բաթիկին» ևւ
նայնչափ ձեռնհաս աշակերտների ընթերցանու-
թեան առաջնորդ հանդիսանալու, որչափ մի այլ
օտար դպրոցներում ուսած համալսարանական)
400 Բ. ուսկով պաշտօնի է հրաւիրել — կարող է
այնպիսի մէկը միայն, որ դժուարանում է բժշկանէլ,
կամ որի հաշուին չի գալիս երբ մի համալսա-
րանաւարտ այդպիսի շնչին ուսկով ծառայելու
ևւ ապա գիւղի դպրոցում ձրի դասեր տալու
միամտութիւնն ունի։ — Ինչ վերաբերում է ձեմա-
րանի «առանց պարապելու մնացած» դասերին՝
թող ո՛չ որ հող չանէ այդ մասին, կրօնի մի քանի
դասեր մի երկու շաբաթ (որի վերայ եթէ աւե-
լացնենք արձակուրդի երկու շաբաթը ևւ կրկնա-
պատկենք՝ կլինի «երկու ամիս») պարապ մնացին
միայն այն պատճառաւ, որ իմ անակընկալ բա-
ցակցութիւնն արդէլք եղաւ վաղօրօք հոգալու
նոցա համար, ծննդեան տօներից յետոյ նոքա
բաժանուեցան իմ ևւ իմ ընկեր Գարեգին վար-
դապետի մէջ, ևւ այլ ևւ պարապ դաս չկար։ —
Կարելի է վերջապէս, ևւ որտե՛ղ է ընդունուած
մի դպրոցի ներքին կեանքին վերաբերեալ այս-
պիսի մանր խնդիրներ լրագրութեան նիւթ դար-
ձնել։ — ձեմարանը մի երկու տառնակ հանդէսներ
ևւ զրական երեկոյթներ է ունենում տարուայ
մէջ, որոնք մեծ մասամբ ընտանեկան ընաւորու-
թիւն ունին ևւ մարդ դարմացնելու համար չեն,
այլ միջոց տալու համար ամէն ընդունակութեան
տէր ևւ ամէն դասարանի աշակերտի հանդէս
դալու՝ իւր գրաւոր ևւ բանաւոր աշխատութիւն-
ներով, ևւ վարժութիւն ձեռք բերելու։ Արդ, ո՛վ
կարող է պահանջել, որ այդ դէպքում բոլոր
ամբիւն բարձրացողները փայլուն ճառախօսներ
լինին ևւ ըստ մեծի մասին ամէն տարի կրկնուող
նիւթերով անխտիր հետաքրքրութիւն պատճառեն
թէ ցածր դասարանի 12 տարեկան աշակերտին
ևւ թէ 22 տարեկան ուսանողին, ո՛ր ահանատեսը
չգիտէ, թէ ձեմարանի արդի վարչութիւնը շատ
ջանքեր է գործ դրել այդ հանդէսներն ըստ կա-
րելւոյն արդիւնաւէտ կացուցանելու, թէ ձեմա-
րանի պ. Տեսուչը այն ժամանակ միայն քացա-
կայել է, երբ հիւանդ փակուած է եղել տանը,
ևւ ուսուցիչները պարտադիր չլինելով ներկայ
գտնուելու, այլ հրաւիրուելով՝ ներկայ են եղել
մեծ մասամբ, երբ մի յարգելի պատճառ չի
արդեւել։